Մենք և Մեր Իրավունքները

Իրավական վերլուծության հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

1. Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության վերլուծություն 5

1.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 5

1.2. ՀՀ օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին 7

1.3. Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքը 8

1.4. ՀՀ կառավարության որոշումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի մասին 10

2. Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված կամ վավերացված միջազգային պայմանագրեր 12

2.1. Կոնվենցիա մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 12

2.2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 14

2.3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագիր 16

2.4. ՄԱԿ-ի հռչակագիր «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության» վերաբերյալ 18

2.5. ԵՄ դեկլարացիա նվիրված «Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան» 19

2.6. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիր 20

2.7. ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին «Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքության հիման վրա խտրականության վերացման միջոցների» վերաբերյալ 21

2.8. ԵԽԽՎ բանաձև ուղղված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությանը» 22

3. Միջազգային պայմանագրերի ցանկ, որոնց միացել է Հայաստանի Հանարպետությունը . 23

Եզրակացություն 24

Հապավումներ և հասկացություններ

ԼԳԲՏ	Լեսբուհի (կին նույնասեռական), գեյ (տղամարդ նույնասեռական), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (գենդերափոխ)
ԳԲՏ	Գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
ԼԲՏ	Լեսբուհի, բիսեքսուալ, տրանսգենդեր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդական վեհաժողով
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԱլԳ	Արևելյան գործընկերություն
Սեռական կողմնորոշում	Յուրաքանչյուր անձի զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակումը որոշակի սեռի այլ անձի հանդեպ
Նույնասեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն սեռի այլ անձի նկատմամբ
Տարասեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Երկսեռական	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում ինչպես նույն, այնպես էլ հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Գենդերային ինքնություն	Յուրաքանչյուր անձի ներքին և անհատական ընկալումը այն դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ, որը հասարակության կողմից բնորոշվում է կնոջը և տղամարդուն: Անձի գենդերային ինքնությունը կարող է տարբերվել այն սեռից, որը որոշվում է ծծնդի պահին
Գենդերափոխ	Անձ, որի ինքնությունը կամ արտաքինը տարբերվում է իր կենսաբանական սեռին բնորոշ դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ հասարա-կության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային սպասումներից
Հոմոֆոբիա	(Հոմո - նույն, ֆոբիա - վախ) Բացասական վերաբերմունք և զգացողու-թյուններ նույասեռականության նկատմամբ կամ այն անձանց նկատմամբ, ովքեր նույնականացվում կամ ընկալվում են որպես նույնասեռական
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՁԻԱՀ	Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ

Նախաբան

Բոլոր մարդիկ ծնվում են հավասար, իրենց արժանապատվությամբ, անօտարելի իրավունքներով և հիմնական ազատություններով: Նրանք ունեն բանականություն ու խիղճ:

Յուրաքանչյուր ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության հիմքում ընկած է պահպանել, խրախուսել ու պաշտպանել յուրաքանչյուր անհատ մարդու իրավունքները: Այս պարտավորությունը բխում է պետության շահերից, որը վերահաստատում է աշխարհի ժողովուրդների հավատը մարդու հիմնական իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքների նկատմամբ:

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի, օգտվելու իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը և հավասար ու անօտարելի իրավունքները աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են: Անհրաժեշտ է, որպեսզի մարդը, որպես մի վերին միջոցի, չդիմի ապստամբության ընդդեմ բռնության ու ճնշման, օրենքի իշխանությամբ պաշտպանի իր իրավունքները:

Անհրաժեշտ է նպաստել ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը, քանի որ Միավորված ազգերի ժողովուրդները վերահավաստել են իրենց հավատը մարդու հիմնարար իրավունքների, անձի արժանապատվության ու արժեքի նկատմամբ և որոշել են ավելի մեծ ազատության պայմաններում նպաստել սոցիալական առաջընթացին ու կյանքի պայմանների բարելավմանը:

Անձը չի կարող իրեն զգալ տվյալ պետության լիիրավ քաղաքացի այն պարագայում, երբ տվյալ անհատի իրավունքները ոտնահարվում են հասարակության կողմից խարանի և խտրականության արդյունքում: Խոսելով մարդու իրավունքներից և նրա արժանապատվության նկատմաբ հարգանքի ու պաշտպանության կարևորության մասին՝ հարկ է անդրադարձ կատարել նաև խոցելի համարվող ԼԳԲՏ անձանց:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմնահարցերի նկատմամբ վերաբերմունքը եղել է տարբեր մարդկության զարգացման ընթացքում: Այժմ մի շարք երկրներում ԼԳԲՏ իրավունքները պաշտպանված են պետության և օրենքի մակարդակով, սակայն կան նաև երկրներ, որտեղ ԼԳԲՏ անձիք հնարավորություն չունեն վայելելու իրենց անօտարելի համարվող իրավունքերը: Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը կարող է պատճառ հանդիսանալ անձի բանտարկության և անգամ նրան մահապատժի ենթարկելու համար:

ՀՀ-ում մինչ 2003 թվականը տղամարդը տղամարդու հետ սեռահարաբերությունը ըստ քրեական օրենսգքրի հոդված 116-ի քրեորեն հետապնդելի արարք էր համարվում: Հոդվածն

այժմ դիտարկվում է որպես ուժը կորցրած: Չնայած այդ հանգամանքին՝ «Մենք և մեր իրավունքները» ծրագրի շրջանակներում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության կողմից 2010 թ.-ին իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները վկայում են, որ համայնքի ներկայացուցիչները առ այսօր բախվում են մի շարք խնդիրների և հնարավորություն չունեն ամբողջությամբ իրականացնելու իրենց իրավունքները՝ որպես հասարակության լիարժեք անդամ: ԼԳԲՏ անձիք հաճախ ագրեսիայի և բռնության զոհ են դառնում:

Այսօր դեռևս գոյություն չունեն հստակ պարզաբանումներ մարդու սեռական կողմնորոշման ծագումնաբանության և պատճառաբանության վերաբերյալ՝ լինի այն տարասեռական, նույնասեռական, թե՝ երկսեռական: Գոյություն ունեցող բոլոր վարկածներն էլ թերի են և պահանջում են հետագա ուսումնասիրություն՝ դրանք ապացուցելու կամ հերքելու նպատակով:

Ինչպիսին էլ որ լինի մարդու սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, այն պահանջում է հարգալից, հանդուրժողական վերաբերմունք, ինչպես նաև սեռական բազմազանությունը որպես այդպիսին ընդունելու կարիք, իսկ որոշ դեպքերում՝ մասնագիտական խնամք և աջակցություն, ինչպես նաև պետության մոտեցումը այս խմբի անձանց նկատմամբ, որը ֆիքսված կլինի համապատասխան իրավական ակտերում և կերաշխավորի այս անձանց պաշտպանվածությունը և կարգելի նրանց նկատմամբ խտրական և անհարգալից մոտեցումը:

1. Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության վերլուծություն

1.1 ՀՀ Սահմանադրություն և ՀՀ օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին գլուխը ամրագրում է սահմանադրական կարգի հիմունքները, որի Հոդված 3-ը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը ամրագրում է Մարդու և քաղաքացու հիմնական իրավուքները և ազատությունները, որի Հոդված 14-ը սահմանում է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում են պետության կողմից»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Հոդված 14.1-ը. սահմանում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Հայաստանի Հանարապետության կառավարության աշխատակազմում գործում է Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն, որի գործունեությունը վերաբերում է ազգային փոքրամասնություններին և կրոնի ու խղճի ազատությանն առնչվող հիմնահարցերին:

Վարչությունը՝

ա) իրականացնում է իր գործունեության ոլորտներին առնչվող՝ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի քննարկմանը կամ կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև առանձին հարցերի հետ կապված մասնագիտական փորձաքննություն, տալիս է համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ,

բ) կրոնական կազմակերպության ներկայացրած համապատասխան փաստաթղթերի հիման վրա տալիս է փորձագիտական եզրակացություն՝ նախքան կրոնական կազմակերպության պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցման ստացումը,

գ) վերլուծում և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ վարչության գործունեության ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ,

դ) վերլուծում և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում տարեկան հաշվետվություն վարչության գործունեության վերաբերյալ:

Այսպիսով, Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, առաջնորդվելով վարչության գործունեությունը կարգավորող օրենքներով և միջազգային պայմանագրերով, իր գործունեության մեջ ընդգրկել է ազգային փոքրամասնությունների և կրոնական կազմակերպությունների հիմնահարցերը: Դատելով օրենքներից և միջազգային պայմանագրերից, ըստ որոնց կարգավորվում է վարչության գործունեությունը, տրամաբանական կլինի, եթե վարչությունը իր գործունեության ոլորտում ընդգրկի ԼԳԲՏ առնչվող հիմնահարցերը, որը կստեղծի անհրաժեշտ պայմաններ ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության համար և կնպաստի պետական ծախսերի առավել ռացիոնալ իրագործմանը, քանի որ նոր վարչության հիմնադրումը կպահանջի ֆինանսական, մարդկային և ժամանակային ռեսուրսների ներդրում:

1.2 ՀՀ օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին

Հայաստանի Հանարպետությունում 1991թ. հունիսի 17-ից Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից ընդունվել է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենք, որը փոփոխություններով և լրացումներով (Ազգային Ժողովի կողմից 1997թ. սեպտեմբերի 19-ին և 2001թ. ապրիլի 25-ին) գործում է առ այսօր:

Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգ ու կանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

Քաղաքացիական պարտականությունների և համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:

1.3 Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքը

Ելնելով ԼԳԲՏ անձանց առանձնահատկություններից և հաշվի առնելով ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից կատարվող քայլերը՝ ուղղված հասարակության մեջ հանդուրժողականության տարածմանը և բոլոր ձևերի խտրականության վերացմանը, ՀՀ քաղաքացիները կարող են օգտվել ներքոնշյալ օրենքից:

2003 թվականի դեկտեմբերի 17-ի Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը, որը ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 1-ից, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այլընտրանքային ծառայության զորակոչ կազմակերպելու և անցկացնելու կարգը:

Օրենքի **Հոդված 3**-ը ամրագրում է այլընտրանքային ծառայության անցնելու հիմքը, որը սահմանում է. «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին իրավունք ունի անցնելու այլընտրանքային ծառայության, եթե նրա կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական ստորաբաժանումներում պարտադիր զինվորական ծառայության անցնելը, ինչպես նաև զենք կրելը, պահելը, պահպանելը և օգտագործելը»:

Օրենքի **Հոդված 4**-ը ամրագրում է այլընտրանքային ծառայության ուղարկվող քաղաքացին, որը սահմանում է. «Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչև հերթական զորակոչին նախորդող մարտի 1-ը կամ սեպտեմբերի 1-ը դիմել է իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի հիմքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորության բացակայության մասին, և ում նկատմամբ տեղական զորակոչային հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշում»:

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարեկետման իրավունք ստանալու հիմք ունեցող քաղաքացիների վրա:

Օրենքի **Հոդված 7**-ը ամրագրում է պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելը, որը սահմանում է. «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին այլընտրանքային ծառայություն ընտրելիս, սույն օրենքի 4-րդ հոդվածում սահմանված ժամկետում, գրավոր դիմում է ներկայացնում իր բնակության վայրի զինվորական կոմիսարիատ՝ նշելով իր նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը և շարադրելով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու նպատակները»:

Քաղաքացու դիմումը զինվորական կոմիսարիատում գրանցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, փոխանցվում է տեղական զորակոչային հանձնաժողովի քննարկմանը:

Տեղական զորակոչային հանձնաժողովն այլընտրանքային ծառայության մասին դիմումը քննարկում է առանձին նիստում: Դիմողը հանձնաժողովի նիստի ժամանակի և վայրի մասին

նախապես տեղեկացվում է: Զորակոչային հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի համար ընդունում է որոշում:

Օրենքի Հոդված 14-ը ամրագրում է այլընտրանքային ծառայության իրականացնելն ապահովելը, որը սահմանում է. «Այլընտրանքային ծառայության զորակոչը կազմակերպում և դրա իրականացումը վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը»:

Հայաստանի Հանրապետությունում այլընտրանքային ծառայության անցնելու վայրերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցների հաշվից:

1.4 ՀՀ կառավարության որոշումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի մասին

Հայաստանի Հանրապետության 2007 թվականի մարտի 1-ի N 398-Ն կառավարության որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին միջգերատեսչական հակազդման և միասնական գործողությունների իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 316 որոշմամբ հաստատված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական ծրագրի շարունակականության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է՝ հաստատել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագիրը, որի իրականացնողներն են ՀՀ Առողջապահության նախարարությունը, ՀՀ Արդարադատության նախարարությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային ծառայությունը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ Ոստիկանությունը, ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ Պաշտպանության նախարարությունը և ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի **3-րդ նպատակը** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումն է հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում:

Վերոնշյալ Ծրագրի **3-րդ նպատակի ռազմավարություն 1**. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումներում հոմոսեքսուալ տղամարդկանց ընդգրկվածության ընդլայնում:

3-րդ նպատակի ռազմավարություն 2. հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների ներուժի զարգացում՝ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի 3-րդ նպատակի ակնկալվող արդյունքներն են.

1. Երևանում և հանրապետության 2 մարզերում կիրականացվեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում (2007-2011թթ.):
2. Կստեղծվի հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանց (2007թ.):
3. Կընդլայնվի հոմոսեքսուալ տղամարդկանց ընդգրկումը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերում. նրանցից առնվազն 1500-ն ընդգրկված կլինի այդ ծրագրերում և կունենան համապատասխան հասանելիություն ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտության, սոցիալ-հոգեբանական և իրավաբանական ծառայություններին, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների բուժման և այլ ծառայություններին, որոնք տրամադրվում են ծրագրերի շրջանակներում (2007-2011թթ.):
4. Տղամարդու հետ վերջին սեռական հարաբերության ժամանակ հոմոսեքսուալ տղամարդկանց կողմից պահպանակի օգտագործումը կհասնի 80%-ի (2010-2011թթ.):

5. Հոմոսեքսուալ տղամարդկանց 80%-ը գիտելիք կունենա ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման վերաբերյալ (2010-2011թթ.):

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդման ազգային ծրագրի 3-րդ նպատակի իրականացման շրջանակներում ՀՀ Առողջապահության նախարարության կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ առաջնահերթ միջոցառումները հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման նպատակով.

1. Շարունակել հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերի իրականացումը և ընդլայնել ծրագրերի աշխարհագրական ծածկույթը:
2. Անցկացնել սեմինար-վարժանքներ հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներուժի ամրապնդման նպատակով:
3. Աջակցել հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ցանցի ձևավորմանը:

2. Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված կամ վավերացված միջազգային պայմանագրեր

2.1 Կոնվենցիա մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (4-ը նոյեմբերի, 1950թ., Հռոմ)

Հայաստանի Հանրապետությունը ԵԽ-ին իր անդամակցության արարողության պահին ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները:

ՀՀ կողմից ստորագրվել է՝ 25/01/01, վավերացվել է՝ 26/04/02, ուժի մեջ է մտել՝26/04/02:

Սույն կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով ԵԽ-ի անդամներ, նկատի ունենալով 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, նկատի ունենալով, որ սույն Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու ապահովումը, նկատի ունենալով, որ ԵԽ-ի նպատակն է իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելը, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումն և իրականացումն է, կրկին հավաստելով իրենց խորին հավատն առ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից, համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական ճանապարհին, համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1. Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձ պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում :

Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության,

ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 14. Խտրականության արգելում

Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 12 արձանագրություն

Սույն արձանագրությունը ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, հաշվի առնելով այն հիմնարար սկզբունքը, ըստ որի բոլորը հավասար են օրենքի առջև և օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունեն, վճռական լինելով ձեռնարկել հետագա քայլեր, զարգացնել բոլոր անձանց հավասարությունը 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) խտրականության ընդհանուր արգելքի կոլեկտիվ երաշխավորման միջոցով, վերահաստատելով, որ ոչ խտրականության սկզբունքը չի խոչընդոտում մասնակից պետությունների կողմից լիակատար և արդյունավետ հավասարությունը զարգացնելու նպատակով միջոցներ ձեռնարկելուն՝ պայմանով, որ այդ միջոցառումների իրականացման համար գոյություն ունի օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1. Խտրականության համընդհանուր արգելումը

1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության:
2. Ոչ մեկի նկատմամբ պետական մարմնի կողմից խտրականություն չպետք է դրսևորվի սույն հոդվածի 1-ին կետում նշված որևէ հիմքով:

2.2 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեան ընդունեց ու ազդարարեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:

Պատմական նշանակություն ունեցող այս որոշումն ընդունելուց հետո Գլխավոր Ասամբլեան բոլոր անդամ պետություններին կոչ արեց հրապարակել հռչակագրի տեքստը և անել ամեն ինչ փաստաթղթի, տարածման, հրապարակման ու մեկնաբանման համար, գլխավորապես դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, առանց երկրների կամ տարածքների քաղաքական կարգավիճակի տարբերակման:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում Միավորված ազգերի կազմակերպությունը պարզ ու հասկանալի ձևով ներկայացրել է այն իրավունքները, որոնք հավասարապես պատկանում են յուրաքանչյուր մարդու:

Անդամ պետությունները պարտավորվել են Միավորված ազգերի հետ համագործակցությամբ հասնել մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման:

Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, որպես առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության յուրաքանչյուր մարմին, մտքում մշտապես ունենալով այս Հռչակագիրը, ձգտի ուսուցման ու կրթության միջոցով նպաստել այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքին և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե անդամ պետությունների ժողովուրդների և թե դրանց իրավասու տարածքների ժողովուրդների կողմից:

Հոդված 2. Ամեն ոք ունի այս Հռչակագրում բերված բոլոր իրավունքներն ու ազատությունները առանց որևէ խտրականության՝ հիմնված ցեղային, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի վրա:

Ավելին, ոչ մի խտրականություն չպետք է հիմնված լինի երկրի կամ տարածքի, քաղաքական, իրավական, կամ միջազգային կարգավիճակի վրա, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնակառավարվող կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում, որին պատկանում է մարդը:

Հոդված 3. Յուրաքանչյուր ոք ունի ապրելու, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունք:

Հոդված 5. Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների, դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 6. Ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավունք ունի ճանաչվել որպես իրավասուբյեկտ:

Հոդված 7. Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվելու իրավունք: Բոլորը ունեն հավասար պաշտպանության

իրավունք՝ ընդդեմ ցանկացած խտրականության, որով խախտվում է այս Հռչակագիրը, և ընդդեմ նման խտրականության մղող ցանկացած սադրանքի:

Հոդված 12. Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական միջամտության իր անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ, իր տան, թղթակցության և/կամ իր պատվի ու համբավի դեմ կամայական ոտնձգության: Ամեն ոք ունի օրենքով պաշտպանվելու իրավունք ընդդեմ նման միջամտության կամ ոտնձգության:

Հոդված 16.

1. Չափահաս տղամարդիկ ու կանայք, առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման, իրավունք ունեն ամուսնանալ և ընտանիք հիմնել: Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ:
2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում:
3. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և պաշտպանվելու իրավունք ունի հասարակության ու պետության կողմից:

Հոդված 28. Յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ու միջազգային կարգուկանոնի իրավունք, որի դեպքում լիովին իրագործելի են այս Հռչակագրում շարադրված իրավունքներն ու ազատությունները:

Հոդված 29.

1. Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի համանյքի նկատմամբ, ուր և միայն հնարավոր է իր անձի ազատ ու լիարժեք զարգացումը:
2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս, յուրաքանչուր ոք պետք է ենթակա լինի միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են ուրիշների իրավունքների ու ազատությունների համար պատշաճ ճանաչում ու հարգանք ապահովելու և բարոյականության, հասարակական կարգուկանոնի ու ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջները ժողովրդավարական հասարակարգում բավարարելու համար:
3. Այս իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միացյալ ազգերի նպատակներին ու սկզբունքներին:

Հոդված 30. Այս Հռչակագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես որևէ իրավունքի տրամադրում որևիցէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անձանց զբաղվելու մի որևէ գործունեությամբ կամ արարքով, որոնք ուղղված լինեն Հռչկագրում շարադրված ազատությունների ու իրավունքների ոչնչացմանը:

2.3 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Դաշնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 23-ից:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագրի մասնակից պետությունները, հաշվի առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է, ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից, ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական և քաղաքական ազատությունից օգտվող և վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է միայն իրականանալ, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, ինչպես նաև՝ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից: Հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ պետությունների ստանձնած պարտավորությունը՝ խրախուսելու մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը, գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց և այն հանրության հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը:

Դաշնագրի **Հոդված 1**-ը սահմանում է, որ բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

Դաշնագրի **Հոդված 2**-ը սահմանում է.

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:
2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ

միջոցառումներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անգամ եթե այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձինք,

բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները,

գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

Դաշնագրի **Հոդված 3**-ը սահմանում է, որ սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

Դաշնագրի **Հոդված 7**-ը սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2.4 ՄԱԿ-ի հռչակագիր «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության» վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Հռչակագիրը 2008 թվականի դեկտեմերի 19-ին, որը դատապարտում է խտրական վերաբերմունքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ՝ ելնելով սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից:

Հռչակագիրը դատապարտում է մարդու իրավունքների խախտումները՝ հիմնված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա, որ բնագավառում էլ որ դրանք տեղի ունենան, հատկապես երկրում մահապատժի օգտագործումը, տանջանքները և այլ դաժանությունները, անմարդկային և այլասերող վերաբերմունքը կամ մեղադրանքի առաջադրումը, կալանավորումը և այլ ոտնձգությունները:

Հռչակագիրը կոչ է անում բոլոր պետություններին և մարդու իրավունքների միջազգային կազմակերպություններին առաջ քաշել և պաշտպանել բոլոր մարդկանց իրավունքները, անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից:

Հռչակագրի **11-րդ կետը** ամրագրում է, որ պետությունները նախաձեռնեն հատուկ օրենքների կամ իրավական ակտերի ընդունում, որոնք կերաշխավորեն այն հանգամանքը, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ոչ մի պարագայում հիմք չի հանդիսանում քրեական պատասխանատվության, մասնավորապես պատժի սահմանման և ձերբակալման համար:

Հոդված **12-րդ կետը** ամրագրում է, որ պետությունները երաշխավորեն այն հանգամանքը, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա մարդու իրավունքների ոտնահարումները հետաքննվեն, իրավախախտները պատասխանատվության ենթարկվեն և հանձնվեն արդարադատությանը:

Հռչակագրի **13-րդ կետը** ամրագրում է, որ պետությունները հաստատեն մարդու իրավունքների պաշտպանների համապատասխան անվտանգությունը և չեզոքացնեն արգելքները, որոնք խոչընդոտում են նրանց աշխատանքը մարդու իրավունքների, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմնահարցերի վերաբերյալ:

2.5 ԵՄ դեկլարացիա նվիրված «Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան»

2009 թվականի մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ԵՄ դեկլարացիա նվիրված «Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան», որով ԵՄ-ն մերժում և դատապարտում է հոմոֆոբիայի ցանկացած դրսևորում՝ համարելով այս երևույթը մարդկային արժանապատվության պղծում: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությունը անհամատեղելի է այն հիմնական սկզբունքների հետ, որոնց վրա հենվում է ԵՄ-ն, և դեկլարացիան նպատակ է հետապնդում չեզոքացնել անհանդուրժող վերաբերմունքը այս հիմնահարցի նկատմամբ:

Դեկլարացիան ամրագրում է, որ խորապես մտահոգված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմամբ, որը հիմնված է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա, մասնավորապես այս հիմքերի վրա մահապատժի կիրառմամբ, տանջանքի կամ այլ դաժանության, անմարդկային և ստոր վերաբերմունքի կիրառմամբ: Ինչպես նաև դեկլարացիան մատնանշում է, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ոչ մի պարագայում չի կարող հիմք հանդիսանալ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

2.6 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիր

2009թ. սեպտեմբերի 30-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդի 12-րդ նիստի ընթացքում ընդունվել է Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիր:

Վիեննայի դեկլարացիան և գործողությունների ծրագիրը հաստատում են մարդու իրավունքների համընդհանրությունն ու անքակտելիությունը: ԵՄ-ն սատարում է Մարդու իրավունքների խորհրդի շարունակական ջանքերը և մեխանիզմները, որոնք գործի են դրվում այդ փաստաթղթերի իրականացման նպատակով:

ԵՄ-ն երաշխավորում է Մարդու իրավուքների Գերագույն խորհրդի կողմից իրագործված աշխատանքի որակը և լիովին աջակցում է Գերագույն խորհրդի շարունակական ջանքերը խնդիրների արդյունավետ և առավել ընդգրկուն իրականացման գործում:

Վիեննայի փաստաթղթերը հատուկ ուշադրություն են դարձնում քաղաքացիական հասարակության հիմնարար դերին մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի երաշխավորման և խթանման գործում:

Վիեննայի դեկլարացիան վերահաստատում է պետությունների պարտավորությունը մարդու իրավունքների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծման գործընթացում: Պետությունները պետք է գործադրեն բոլոր ջանքերը վերացնելու մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը և դրանց պատճառները:

Իրականում բազմաթիվ մարդիկ դեռևս զրկված են իրենց իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման հնարավորությունից: Մարդու իրավունքների պաշտպանները շարունակում են իրենց պայքարը՝ վտանգի ենթարկելով իրենց և իրենց ընտանիքի անդամների կյանքը: ԵՄ-ն դատապարտում է մարդու իրավունքների պաշտպանների նկատմամբ կատարված ցանկացած քայլ նրանց վախեցնելու նպատակով և վերահաստատում է կառավարությունների և անհատ քաղաքական գործիչների պատասխանատվությունը՝ չկատարելու այնպիսի հայտարարություններ, որոնք կարող են վտանգել նրանց անվտանգությունը:

Կին և տղամարդ նույնասեռական, երկսեռական և գենդերափոխ անձանց նկատմամբ մշտապես դրսևորվող խտրականությունը և մարդու իրավունքների լայնամասշտաբ ոտնահարման դեպքերը տեղի են տալիս լուրջ անհանգստության, և Իրաքում ու Ուգանդայում տեղի ունեցող իրադարձությունները հանդիսանում են խնդրի առնչությամբ վառ օրինակներ: Մարդու իրավունքները կիրառելի են բոլորի համար անկախ սեռից, տարիքից, էթնիկ պատկանելիությունից, սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, կրոնից, հաշմանդամությունից կամ այլ առանձնահատկությունից:

2.7 Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ

2010թ. Մարտի 31-ին ԵԽ-ի Նախարարների Կոմիտեն, ներկայացնելով 47 անդամ պետությունների կառավարությունները, անոնիմ կերպով ընդունել է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ հանձնարարականներ: Սա հանդիսանում է աշխարհի առաջին միջկառավարական համաձայնագիրը, որը սահմանում է մարդու իրավունքների ստանդարտների կիրառումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Հանձնարարականները հաստատում են մարդու իրավունքների միջազգային ստանդարտների կիրառումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ և անդամ պետությունների համար սահմանում են հատուկ միջոցներ բարելավելու օրենսդրությունը, քաղաքականությունը և պրակտիկան, որպեսզի քայլեր ձեռնարկվեն վերացնելու ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականությունը հետևյալ ոլորտներում.

- **ատելության վրա հիմնված ոճիր և խոսք,**
- **ասոցիացիայի, արտահայտման և խաղաղ հավաքների ազատություն,**
- **անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք,**
- **զբաղվածություն**
- **կրթություն**
- **առողջապահություն**
- **բնակարանային ապահովություն,**
- **սպորտ**
- **կացարան փնտրելու իրավունք**

Ավելին, հանձնարարականները սահմանում են՝ անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ մարդու իրավունքների ազգային կառույցների մանդատները հասցեագրում են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության հիմնահարցերը: Դրանք խրախուսում են, որպեսզի անդամ պետությունները անդրադառնան ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության բազմապիսի դրսևորումներին:

2.8 Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձև ուղղված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությանը»

2010թ. ապրիլի 29-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ընդունվեց նոր բանաձև՝ ուղղված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությանը»:

Բանաձևը կետրոնանում է մարդու իրավունքների լայնածավալ բռնությունների վրա, որոնք դեռ սպառնում են ԵՄ երկրներում բնակվող միլիոնավոր մարդկանց.

- **հավաքների և արտահայտման ազատություն**
- **ատելություն սերմանող խոսք**
- **ատելության վրա հիմնված ոճիր**
- **հակախտրականություն**
- **դենգերափոխ անձիք**
- **երիտասարդներ**
- **ԼԳԲՏ ընտանիքներ**
- **ծնողական պատախանատվություն**
- **կացարան**

Առաջարկվեց ստեղծել ռեսուրսներ՝ ԼԳԲՏ հիմնահարցերով զբաղվելու համար և ներառել ԼԲՏ կանանց նկատմամբ կիրառվող բռնության հիմնախնդիրները «Կանանց դեմ բռնության» կոնվենցիայի նախագծում:

3. Միջազգային պայմանագրերի ցանկ, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կոնվենցիաները և հռչակագրերը, ըստ որոնց Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունը.

- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
- Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

Միջազգային փաստաթղթեր, որոնք ստորագրել է Հայաստանի Հանրապետությունը, սակայն դեռ չի վավերացրել.

- ՄԱԿ-ի հռչակագիր «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության» վերաբերյալ
- ԵՄ դեկլարացիա նվիրված «Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան»
- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիր
- ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ
- ԵԽԽՎ բանաձև ուղղված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությանը»

Եզրակացություն

Ելնելով ԼԳԲՏ իրավունքների պաշտպանությանն ուղղված, հասարակության մեջ հանդուրժողականության տարածման և նրանց նկատմամբ բոլոր ձևերի խտրականության վերացումը կարգավորող կամ դրան առնչվող օրենսդրական դաշտի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքներից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ ԼԳԲՏ իրավունքների պաշտպանությանը առնչվող ոլորտը կարգավորող իրավական դաշտը ոչ միայն միասնականացված չէ, այլև օրենսդրական դաշտում բացակայում են հասկացության սահմանումների օրենսդրական բնորոշումները և ոլորտի առնչությամբ օրենսդրական ամրագրումը, որը կերաշխավորի խմբի իրավունքների պաշտպանության հնարավորությունը:

Մարդու իրավունքների իրականացման պաշտպանությունը, առաջադրումն ու ապահովումը պետությունների առաջնային պատասխանատվություն է, այսինքն՝ պետության կողմից անհատների իրավունքների պաշտպանությունը դառնում է նրա իսկ պարտականությունը:

ԼԳԲՏ հիմնահարցերի ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը պետք է ներառի մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մասն են դառնում և ազգային օրենսդրության հետ հակասության մեջ մտնելու պարագայում պետք է գերակայեն միջազգային իրավական նորմերը:

Միանալով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերին՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է որոշակի պարտավորություններ: Օրինակ, միանալով Քաղաքական և Քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրին՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է պաշտպանել և ապահովել տեղաշարժի ազատությունը, օրենքի առջև հավասարությունը, արդար դատավարության իրավունքը և անմեղության կանխավարկածը, մտքի, խղճի ու կրոնի ազատությունը, կարծիքի ու արտահայտման ազատությունը, խաղաղ հավաքների, միավորման, հասարակական գործերին ու ընտրություններին մասնակցության ազատությունը և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Սա միանշանակ վկայում է, որ մարդու իրավունքներին վերաբերող հարցերը, այսինքն՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն ու պաշտպանելը Հայաստանի Հանրապետության անմիջական պարտականությունն է:

Հայաստանի Հանրապետությունը 2008 թվականից ի վեր ստորագրել է միջազգային պայմանագրեր սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ, որոնցում ամրագրված է ցանկացած տեսակի խտրականության վերացումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Այդ փաստաթղթերում հիմնականում դատապարտվում է խտրական վերաբերմունքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, անկախ սեռական կողմնորոշումից և գենդերային ինքնությունից: Սակայն այդ պայմանագրերը դեռ վավերացված չեն Հայաստանի Հանրապետության կողմից, և պետությունը ստանձնած պարտավորություններ չունի դրույթներն ի կատար ածելու:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ քանի դեռ չի գործում պատշաճ իրավական շրջանակ, ապա հնարավոր չէ իրականացնել ԼԳԲՏ նկատմամբ խտրականության և բռնության վերացման ուղղությամբ իրական քայլեր:

Միանալով «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» Եվրոպական կոնվենցիային՝ Հայաստանի Հանրապետությունը ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը:

Հայաստանի Հարապետությունում մինչև 2003 թվականը քրեորեն հետապնդելի արարք էր տղամարդու սեռական հարաբերությունն այլ տղամարդու հետ (քրեական օրենսգրքի 116-րդ հոդված, որը ուժը կորցրած է ճանաչվել): Պետության կողմից օրենքը իր ուժը կորցրած համարելը արդեն իսկ դրական քայլ է, այնուհանդերձ օրենսդրությունը լիակատար չէ:

Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով ՄԱԿ-ի հռչակագիրը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վերաբերյալ, ԵՄ դեկլարացիան նվիրված հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Վիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիրը, ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ, ԵԽԽՎ բանաձևը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության վերաբերյալ, կատարում է իր նախնական քայլերը ԼԳԲՏ իրավունքների պաշտպանվածությունը երաշխավորելու ուղղությամբ, սակայն դեռևս կա անհրաժեշտություն շարունակական ու հետևողական միջոցառումների, քանի որ խնդրի առնչությամբ կատարված միջոցառումները բավարար չեն ԼԳԲՏ անձաց համար արժանապատիվ և անվտանգ կյանք ապահովելու համար:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության և օրենսդիր մարմնի վերաբերմունքի փոփոխությունը, ինչպես նաև այն միջազգային պայմանագրերը, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը, ապա բարենպաստ իրավական կարգավորման տեսակետից հատկապես կարևոր է ուշադրություն հրավիրել խնդրին:

1. Քանի որ ՀՀ-ն ընդգրկված է ԵՄ ԵՀՔ և ԱլԳ մեջ և ձգտում է դառնալ եվրոպական ընտանիքի անդամ, անհրաժեշտ է ապահովել օրենսդրական դաշտի և քաղաքականության համապատասխանեցումը ԼԳԲՏ հիմնահարցերին առնչվող ԵՄ օրենսդրությանը և անդամ պետությունների պրակտիկային: Համապատասխան ԵՀՔ և ԱլԳ՝ ՀՀ-ը համագործակցություն է հաստատում ԵՄ անդամ պետությունների հետ հանուն արդարության, ազատության և անվտանգության: Կարելի է եզրակացնել՝ ՀՀ

քաղաքականությունը պետք է ընդգծի ԵՄ նպատակը ԵՀՔ և ԱլԳ շրջանակներում իրականացվող աշխատանքները դյուրին դարձնելու նպատակով:

2. Անհրաժեշտ է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության բոլոր ձևերն արգելող և գենդերային ինքնության ճանաչման վերաբերյալ օրենքի ընդունում, որը կսահմանի.
   - օրենքի կարգավորման առարկան
   - օրենքի գործողության ոլորտը
   - օրենքի նպատակները
   - օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները
   - գենդերային ինքնության ճանաչման հիմնական սկզբունքները
   - ԼԳԲՏ հասկացությունը/սահմանումը
   - ԼԳԲՏ անձանց պետական աջակցությունը
   - ԼԳԲՏ անձանց իրավունքներն ու պարտականությունները
   - Գենդերափոխ անձանց բժշկահոգեբանական գնահատման ներկայացնելը (ինքնությանը համապատասխանող փաստաթղթերի ձեռք բերման, սեռի փոփոխման վիրահատական միջամտության համար)
   - Գենդերափոխ անձանց անձը հաստատող փաստաթղթերի ձեռք բերման հիմքերը
   - պատասխանատվությունը օրենքի խախտման համար

3. Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականության բոլոր ձևերն արգելող և գենդերային ինքնության ճանաչման վերաբերյալ օրենքի ընդունումը անհրաժեշտություն կառաջացնի, որպեսզի կառավարությունը կա՛մ մի շարք ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունի, կա՛մ փոփոխություններ ու լրացումներ կատարի արդեն իսկ գործող ենթաօրենսդրական նորմատիվ ակտերում, որոնք կապահովեն վերոնշյալ օրենքի կիրառումը:

4. Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ «Այլընտրանքային ծառայության» մասին օրենքում կատարվի համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք կապահովեն ԳԲՏ անձանց զինվորական ծառայությունը:

5. Դատողություններ կատարելով այն օրենքներից և միջազգային պայմանագրերից, որոնցով կարգավորվում է ՀՀ Կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը՝ առաջակվում է որպեսզի վարչությունը իր գործունեության ոլորտում ընդգրկի նաև ԼԳԲՏ առնչվող հիմնահարցերի կարգավորումը:

6. Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի Հանարպետության 1991թ. հունիսի 17-ի «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում կատարի համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որը կներառի նաև ԼԳԲՏ հիմնահարցերին առնչվող օրենսդրական կարգավորումներ:

7. Անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ օրենսդրական դաշտում կատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք կապահովեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ենթարկելու, ատելություն քարոզելու կանխարգելումը և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավրության կողմից վերոնշյալ փոփոխությունների իրականացումը կնպաստի մեր երկրում ԼԳԲՏ անձանց իրավունքների լիարժեք պաշտպանմանը: Այն հնարավորություն կընձեռի մարդու իրավունքների համընդգրկուն և առանց խտրականության պաշտպանությանը, ինչպես նաև կհանդիսանա դրական քայլ Հայաստանի Հանրապետության ժողովրդարացման գործընթացում:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

© 2010 «Հանրային Տեղեկատվություն և Գիտելիքի Կարիք» ՀԿ
է-փոստ info@pinkarmenia.org
կայք http://www.pinkarmenia.org